



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

դեկտեմբերի 2018 թվականի №---Ա
քաղ. Երևան

**«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019-2021
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի №548Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 10-ի №365Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019-2021 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-6 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019-2021 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 29 598,4 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
 - 1) գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ընդլայնում՝ 19 677,3 մլն դրամ,
 - 2) գազափոխադրման համակարգի ընդլայնում՝ 3 946,6 մլն դրամ,
 - 3) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 225,7 մլն դրամ,

- 4) նոր բաժանորդների միացում՝ 1 092,8 մլն դրամ,
 - 5) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 3 183,8 մլն դրամ:
 - 6) «Հրազդան-5» հիմնարկի համար ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ՝ 472,3 մլն դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018-2020 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №401Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №548Ա որոշմամբ հաստատված ներդրումային ծրագրի 2019 և 2020 թվականների հատվածները:
4. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2019 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2020-2022 թվականների ներդրումային ծրագիրը:
5. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հավելված №1

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018
թվականի դեկտեմբերի -ի N°Ա որոշման

«Հավելված №1

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017
թվականի դեկտեմբերի 13-ի N°548Ա որոշման

**Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-
կայանի ընդլայնմանն ուղղված ներդրումների 2018 թվականի կանխատեսվող
ծավալը**

մլն դրամ՝ առանց ԱԱՀ

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Նոր գազահորի շինարարություն			430.9
1)	N° 23 գազահորի շինարարություն			145.7
2)	N° 4 գազահորի շինարարություն			285.2
	Ընդամենը			430.9 »

Հավելված №2

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի դեկտեմբերի -ի №Ս որոշման

«Հավելված №2

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման

**Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումների 2018 թվականի կանխատեսվող
ծավալը**

մլն դրամ՝ առանց ԱԱՀ

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Նոր մայրուղային գազատարերի կառուցում			
1)	Կարմիր Կամուրջ-Ալավերդի Ծպ-700 գազատարի կառուցում (տեղափոխում Վրաստանի տարածքից)	կմ	3.2	1,122.5
2)	Ղազախ-Երևան-ԳՄՊԿ գազատարի Ծպ700 լուպինգի կառուցում, այդ թվում՝			24.5
ա)	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում			24.5
3)	Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Ծպ1000 գազատարի ԿՄ0.0-:- 15.0 հատվածի լուպինգի կառուցում			10.0
ա)	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում			10.0
	Ընդամենը			1,157.0 »

Հավելված №3

Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
 2018 թվականի դեկտեմբերի -ի №Ա որոշման

«Հավելված №3

Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017
 թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման

**Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների 2018
 թվականի կանխատեսվող ծավալը**

մլն դրամ՝ առանց ԱԱՀ*

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում		226	55.8
1)	Ներսաչափի ձեռքբերում՝ HMT (Micron) տիպի կամ նմանատիպ	հատ	1	0.1
2)	Երկարության չափման հավաքածուի ձեռքբերում՝ KMՃ տիպի կամ նմանատիպ	հատ	1	3.7
3)	Խտաչափերի համար "KROHNE" DK32 տիպի (0÷10 լ/ժ չափման տիրույթով) ռոտամետրի (ծախսաչափի) ձեռքբերում	հատ	4	2.0
4)	Խողովակափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	2	4.8
5)	Դաշտային գազափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	3	11.2
6)	Շարժական գազափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	20	3.0
7)	Պայթյունաանվտանգ շարժական լապտերների ձեռքբերում՝ FP-BC Ekoton -3 տիպի կամ նմանատիպ	հատ	105	6.1
8)	Արտահոսքի շարժական հայտնաբերիչ TIG -2M	հատ	85	10.7
9)	Հայտնաբերիչ մայրուղային Radiodetection RD-5000	հատ	3	6.4
10)	Բնական և հեղուկ գազի արտահոսքի հայտնաբերիչ AXT-TI	հատ	2	7.7
2	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում		7	196.5

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1)	Էքսկավատոր-հիդրավլիկ թրթուրավոր 1,85մ ³ շերտի տարողությամբ, JCBJS370LC մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	118.9
2)	Ավտոամբարձիչ՝ 25տ KC-45717A-1P MA3-6312 մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	49.1
3)	Բեռնատար-մարդատար ավտոմեքենա՝ YA3 390995 մակնիշի կամ նմանատիպ	հատ	2	10.9
4)	Բեռնամարդատար ավտոմեքենա՝ YA3 3303 մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	5.2
5)	Մարդատար ավտոմեքենա՝ Շովրոլե Նիվա մակնիշի կամ նմանատիպ*	հատ	2	12.4
3	Հողատարածքների (հողամասերի) ձեռքբերում	հա		0.3
	Ընդամենը			252.5 »

*Չաշվի առնելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 72-րդ հոդվածը՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գումարները ներկայացված են ԱԱՀ-ով:

Հավելված №4

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018
թվականի դեկտեմբերի -ի №Ա որոշման

«Հավելված №4

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017
թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման

**Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումների 2018 թվականի
կանխատեսվող ծավալը**

մլն դրամ՝ առանց ԱԱՀ

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում (G4 և G6 տիպի)	հատ	11500	533.4
2	Գազաբաշխիչ ցանցի նոր գազատարների կառուցում (ցանցի ընդլայնում)	կմ		31.5
1)	Լոռու մարզի գ.Դեբեդ Հայաստանի մանուկների հիմնադրամի Սմարթ կենտրոնի գաիֆիկացում	կմ	2.65	27.5
2)	Նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքներ			4.0
Ընդամենը				564.9 »

Հավելված №5
 Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018
 թվականի դեկտեմբերի -ի №Ա որոշման

«Հավելված №5
 Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017
 թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման

Գազարաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների 2018 թվականի կանխատեսվող ծավալը

մլն դրամ՝ առանց ԱԱՀ*

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում			565.4
1)	Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում, այդ թվում՝	հատ	12250	361.4
2)	Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում			204.0
2	Ավտոտրանսպորտային միջոցների և մեքենա-մեխանիզմների ձեռքբերում		38	441.1
1)	Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում՝, այդ թվում՝	հատ	11	100.8
ա)	Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի)	հատ	4	40.0
բ)	Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (ցածր դասի)	հատ	10	60.8
2)	Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝	հատ	17	152.1
ա)	Վթարային բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա	հատ	5	21.9
բ)	4,5 տ բեռնատարողությամբ վթարային-վերանորոգման ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի բեռնատար ավտոմեքենայի բազայի վրա	հատ	6	97.5
գ)	Մինչև 1,5 տ բեռնատարողությամբ բարձր անցողունակության բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի	հատ	6	32.8
3)	Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝	հատ	4	33.2
ա)	Մինչև 1,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներ	հատ	2	12.8
բ)	Մինչև 4,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաներ	հատ	2	20.4
4)	Հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝	հատ	3	78.9
ա)	Ավտոկռունկի ձեռքբերում ՄԱԶ տիպի	հատ	1	36.2
բ)	Մեկ խցիկով և ամբարձիչ մանիպուլյատորով հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում	հատ	2	42.7
5)	Շինարարական տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում՝		3	76.1
ա)	Անիվավոր ամբարձիչ-էքսկավատորի ձեռքբերում. JCB 3CX տիպի, 0,17 մ3 շերտփի տարողությամբ, հագեցած հիդրոմուտորով և խրամուղային շերտփով	հատ	2	74.9
բ)	Ասֆալտ-բետոն կտրող մեքենայի (մոտորով) Q420 մակնիշի ձեռքբերում		1	1.2
3	Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում	հատ		144.6
1)	Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռքբերում			67.6
2)	Գույքի ձեռքբերում			48.7
3)	Մերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և արտոնագրերի ձեռքբերում			28.3
4	Ավտոմեքենաների վերասարքավորում՝ քնական գազով լիցքավորման համար	հատ	27	16.8
	Ընդամենը			1,167.9

*Հաշվի առնելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 72-րդ հոդվածը՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գումարները ներկայացված են ԱԱՀ-ով:

Հավելված №6

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018
թվականի դեկտեմբերի -ի №Ա որոշման

«Հավելված №6

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017
թվականի դեկտեմբերի 13-ի №548Ա որոշման

**«Հրագրան-5» հիմնարկի համար ավտոտրանսպորտային միջոցների
ձեռքբերմանն ուղղված ներդրումների 2018 թվականի կանխատեսվող
ծավալը**

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում*, այդ թվում՝	հատ	2	41.2
1)	Օպերատիվ միկրոավտոբուսների ձեռքբերում	հատ	1	7.0
2)	Օպերատիվ ավտոբուսների ձեռքբերում	հատ	1	34.2
	Ընդամենը			41.2 »

*Հաշվի առնելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 72-րդ հոդվածը՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման
գումարները ներկայացված են ԱԱՀ-ով: